



Թագաւորն ու Ծովը
Der König und das Meer

Հեղինակ
Հայնց Եանիշ

Նկարազարդող՝
Վոլֆ Էրլպրուխ

Թարգմանիչ՝
Սեան Տէյիրմենճեան

Խմբագիր՝
Սեւենկիւ Մեօնմէզ

Էջադրում՝
Մելիսա Արսէնեան

Հոկտեմբեր 2021, Ստանպուլ

© 2008 Carl Hanser Verlag GmbH & Co. KG, Միւնիխ

Հայերէն հրատարակութեան իրաւունքները վերապահուած են «Հիփփօ»-ին:
Հեղինակային իրաւունքները առնուած են «Անաթոլիալիթ» հեղինակային իրաւունքներու
գործակալութեան միջնորդութեամբ:
ISBN 9786057469274

Հիփփօ Գիրք

İstiklal Caddesi Hıdivyal Palas No: 231 Kat 1 34430 Tünel, Beyoğlu-İstanbul

Tel: (0212) 252 65 18 - 243 06 02 Faks: (0212) 252 65 19

info@hippokitap.com www.hippokitap.com / Sertifika No: 10728

«Հիփփօ» «Արաս» հրատարակչութեան ձեռնարկն է:

Տպագրութիւն՝ Veritas Basım Merkezi

Aydınlı – Kosb Mah. Tuzla Kimya Sanayicileri O.S.B. Analitik Cad. No: 46 34953 Tuzla / İstanbul

Tel: 444 1 303 / Sertifika No: 50209

Հայնց Եանիշ · Վոլֆ Էրլպրուխ

Թագաւորն ու Ծովը

21 կարճիկ հեքիաթ

Թարգմանեց՝ Սեան Տէյիրմենճեան

Թագաւորն ու Ծովը

«Ես թագաւոր եմ», ըսաւ թագաւորը:

Ծովը պատասխանեց խշխշալով:

«Գիտեմ», ըսաւ թագաւորը:

Լոեց ու դարձաւ մտածկոտ:

«Գիտեմ», մըմնջեց:

Յետոյ երկար-երկար ունկնդրեց խշխշոցը:





Թագաւորն ու կատուն

«Ինչ կ'ընես», հարցուց թագաւորը կատուին:

«Մորթս կը ջերմացնեմ արեւի տակ», ըսաւ ան ու երկարեցաւ մարգագետնին վրայ:

«Ուրեմն արեւը այսօր քեզի համար մեծագոյն բանն է»:

«Այսօր այդպէս է», ըսաւ կատուն:

«Այսօր արեւը իմ թագաւորն է»:

Թագաւորը մտածեց պահ մը: Ապա հանեց իր շապիկը, երկարեցաւ մարգագետնին վրայ, կատուին քով ու ինքզինք յանձնեց արեւին:

Թագաւորն ու շուքը

«Ինչո՞ւ կը հետապնդես զիս», հարցուց թագաւորը իր շուքին:
«Որպէսզի յիմար միտքեր չունենաս»,
պատասխանեց շուքը,
«եւ որպէսզի չմոռնաս, թէ մետայլն ունի երկու երես»:
«Ինչպէ՞ս կրնամ մոռնալ», ըսաւ թագաւորը եւ զարմացաւ
տեսնելով պզտիկ թագին մեծ շուքը՝ արեւին տակ:

